ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ,ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԵՀՐԱԲՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ »ՍՊԸ Mehrabyan Medical College LLC

2024-2025 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ

«Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջ»ՍՊԸ-ի/այսուհետ Քոլեջ/ պատմության մեջ 2024-2025 ուսումնական տարին նշանավորվեց Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների վերահավատարմագրման իրողությամբ։ՈԱԱԿ-ի կողմից՝ փորձագետների խմբի զեկույցի հիման վրա, Քոլեջը հավատարմագրվեց չորս տարի ժամկետով՝ հավաստելով համապատասխանությունը կրթության որակի չափանիշներին։ Մինչև հավատարմագրում կշնորհվեր Քոլեջին ,Քոլեջը ՈԱԱԿ է ներկայացրել ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծություն և Քոլեջ այցելած փորձագիտական խմբի նախնական զեկույցի հիման վրա ՈԱԱԿ է ներկայացվել բարելավման նախնական ծրագիր։

Հավատարմագրումը մասնագիտական ուսումնական հաստատությունների և կրթական ծրագրերի կատարողականի և որակի ճանաչումն է, որը հանգեցնում է մատուցվող կրթական ծառայությունների որակի նկատմամբ մասնագիտական կրթության շահակիցների և հասարակության վստահության ձևավորմանը:

Սույն հաշվետվությունը կազմված է Քոլեջի Որակի ապահովման կենտրոնի պատասխանատու կողմից/2024-2025ուս .տարվա 2-րդ կիսամյակից/

Որակյալ ուսուցում և ուսումնառություն ապահովելու նպատակով Քոլեջի որակի ապահովման կենտրոնը որոշակի աշխատանքներ է իրականացրել և այն կազմակերպել նախատեսված կարճաժամկետ աշխատանքային պլանին համապատասխան,որը բխում է որակի ապահովման պատասխանատուի պաշտոնի անձնագրից և Քոլեջի գործող ռազմավարական ծրագրից։

Հաշվետվությունը կազմվել է հետևյալ նկատառումների հիման վրա.

1.Ներկայացնել հաշվետու տարում ՄՈՒՀ-ի Ռազմավարական ծրագրով և ստորաբաժանման աշխատանքային պլանով նախատեսված աշխատանքները։

2.Ներկայացնել նախատեսված աշխատանքների իրականացման ընթացքը և դրանց արդյունքները։

3.Ներկայացնել նախատեսված և չիրականացված աշխատանքների պատճառները և դրանց հետևանքները։

4. Ներկայացնել հաշվետու տարում ստորաբաժանման իրականացրած այլ աշխատանքներ։

5. Ներկայացնել հաշվետու տարում ստորաբաժանման առաջ ծագած խնդիրները և դրանց լուծման հնարավոր ուղիները :

6. Ներկայացնել ստորաբաժանման աշխատանքների բարելավման հնարավոր ուղիներ։

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՊԱՇՏՈՆԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հիմնական գործառույթը՝

- ✓ *համակարգված գործընթացների միջոցով աջակցել կրթական չափորոշիչների պահպանման, կրթական ծրագրերի որակի ապահովման և շարունակական բարելավման աշխատանքներին.*
- ✓ *Քոլեջում իրականացվող ուսումնական բոլոր աշխատանքների վերահսկում, ուսումնական*
- ✓ *մասի և ամբիոնների ուսումնամեթոդական աշխատանքների համակարգում:*
- ✓ *Լրացուցիչ մասնագիտական կրթության ակտերի, ուսումնական ծրագրերի, մեթոդական ցուցումների, այլ անհրաժեշտ փաստաթղթերի մշակման աշխատանքների համակարգում և վերահսկում:*
- ✓ *Կադրերի վերապատրաստման և մասնագիտական ուսուցման աշխատանքների համակարգում:*
- ✓ *Դասախոսական կազմի աշխատանքների պլանավորման և հաշվառման նորմերի համար*

  ստեղծել պայմաններ՝ կրթական ծրագրերի որակի գնահատումն ու հավատարմագրումն իրականացնելու նպատակով:

Որակի ապահովման խնդիրներն են՝

- ✓ *Որակի ապահովման և ուսումնական գործընթացում մասնակցող կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքների գնահատում և վերահսկում ,կրթական բարեփոխումների և ղեկավարման բարձրացման ,մասնագիտական վերապատրաստման և լրացուցիչ կրթության կազմակերպման իրականացում:*

ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Որակի պատասխանատուի կողմից կազմակերպվել և իրականացվել են հետևյալ աշխատանքները՝ կարճաժամկետ աշխատանքային պլանին համապատասխան.

- ✓ *Շարունակաբար իրականացվել են հարցումներ ուսանողների ,շրջանավարտների, դասախոսների և գործատուների, դիմորդների,պրակտիկայի ղեկավարների և համայնքի քաղաքացիների շրջանում:*
- ✓ *Ուսումնասիրվել են շահակիցների շրջանում իրականացված հարցման արդյունքում վերհանված առաջարկությունները, կարծիքները, նկատառումները:*
- ✓ *Իրականացվել են ուսանողների որոշակի ակտիվացում որակի կողմից իրականացրած հարցումների գործընթացին:*
- ✓ *Իրականացրել են դասալսումներ Քոլեջի բոլոր խմբերում:*
- ✓ *Բոլոր հարցումների արդյունքները զեկուցվել են մանկավարժական խորհրդի նիստերին:*

- ✓ *Մանկավարժական նիստերի ժամանակ քննարկվել են քոլեջի ստորաբաժանումներում ՊԻԳԲ շրջափուլի ներդրմանը առնչվող հարցեր:*
- ✓ *Կազմակերպվել և համակարգվել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության գործընթացը:*
- ✓ *Վերահավատարմագրման գործընթացին զուգահեռ իրականացվել և ներկայացվել է բարելավման ծրագիր փորձագիտական խմբի կողմից վերհանված խնդիրների և խորհրդատվությունների վերաբերյալ:*
- ✓ *Դիտարկվել է աշխատանքի պաշտոնի անձնագրում ամրագրված աշխատակցի գործառույթների և հաշվետվությունների համեմատական վերլուծություն, որի հիման վրա իրականացվել է ներքին գնահատում:*
- ✓ *Վերլուծվել է Արագ արձագանքման արկղում առկա ուսանողների կողմից նշված առաջարկություններն ու դիտարկումները:*

Որակի ապահովման կենտրոնի կողմից ,ներքին և արտաքին շահակիցների շրջանում անցկացվող հարցումները կազմակերպվել են «Դասախոսների և ուսանողների բավարարվածության գնահատման ընթացակարգի» և նախօրոք կազմված պլան-ժամանակացույցի համաձայն,որի արդյունքերը վերլուծվել և զեկուցվել են մանկավարժական խորհրդին նիստերին՝ ներկայացնելով յուրաքանչյուր հարցման արդյունքի վերլուծությունը:

ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ

Որակի ապահովման կենտրոնի կողմից իրականացնել են հարցումներ ներքին և արտաքին շահակիցների շրջանում՝ կառավարչական անձնակազմի գործունեության,ուսումնական ռեսուրսների,քոլեջի ամփոփիչ ատեստավորման ,հետազոտական աշխատանքների ,դասախոսների դասավանդման որակի և մի շարք այլ գործընթացների արդյունավետության գնահատման ուղղությամբ:

1.1Ուսանողների շրջանում հարցման կազմակերպում.

2024-2025 ուսումնական տարվա ընթացքում Քոլեջի ուսանողների շրջանում իրականացվել են բազմաթիվ հարցումներ՝անանուն թղթային և էլեկտրոնային հարցաթերթիկների միջոցով :

Հարցման նպատակն է.

- ✓ *բացահայտել ուսանողների կարիքները*
- ✓ *ուսանողների տեղեկացվածության մակարդակը*
- ✓ *ուսանողների բավարարվածության աստիճանը*
- ✓ *կոռուպցիոն վտանգների բացահայտումը*

Հարցնանը մասնակցել են Քոլեջում առկա բոլոր խմբերի ուսանողները:/մոտավորապես ուսանողների 60%-ը / :Հարցումներն անցկացվել են անանուն թղթային տարբերակով և, ինչպես նաև ,

Google Forms հարթակով կազմած հարցաթերթերով,որն ուղարկվել է ուսանողների էլեկտրոնային հասցեներին :

- ✓ *Ուսումնական տարվա առաջին կիսամյակում հարցումներ են իրականացվել քննական գործընթացներից ուսանողների բավարավածությունը պարզելու ,կոռուպցիոն դրսևորումները բացահայտելու նպատակով, հետազոտական աշխատանքներից ուսանողների բավարվածությունը պարզելու նպատակով:Հարցման արդյունքներից պարզ են դառնում, որ ուսանողների մեծամասնությունը տեղյակ են Քոլեջի կրթական ծրագրերից և ,ընդհանուր առմամբ ,գոհ են Քոլեջի դասավանդման որակից,վարչական ծառայությունների կողմից իրականացված աշխատանքների որակից,ինչպես նաև Քոլեջը զերծ է մնում կոռուպցիոն դրսևորումներից :*

Հարցումների արդյունքներից նկատելի է ուսանողների բավարվածության առավել բարձր ցուցանիշ , ուսանողները գոհ և բավարված են քննական ,հետազոտական աշխատանքների գործընթացներից :

- ✓ *Ուսումնական տարվա երկրորդ կիսամյակին Google Form հարթակով հարցում է իրականացվել ուսանողների շրջանում՝ուսումնական և նյութատեխնիկան ռեսուրսների բավարարվածության գնահատման վերաբերյալ: Հարցման նպատակն է բացահայտել քոլեջի ուժեղ և թույլ կողմերը ,վեր հանել առկա խնդիրներն ու թերությունները՝ համապատասխան լուծումներ տալու և հետագա ուսումնական գործընթացն ավելի արդյունավետ իրականացնելու նպատակով:*

Հարցումն ուղարկվել է ուսանողների էլեկտրոնային հասցեներին,որին մասնակցել են ուսանողների 60%-ը:Հարցման վերլուծության արդյունքում ուսանողներրը նշում են ,որ քոլեջում առկա նյութատեխնիկական բազան , ուսումնական ռեսուրսները,տեսական գիտելիքները բավարար և արդյունավետ են ուսումնական գործընթացի կազմակերպման և մասնագիտական պրակտիկայի անցկացման համար,սակայն նրանց կողմից վեր հանված առաջարկությունները վերաբերում են էլ ավելի ուսումնական նյութերի և գործիքների համալրմանը :

- ✓ *Ուս.տարվա երկրրդ կիսամյակի վերջին իրականացվել է հարցում ուսանողների շրջանում՝ դասախոսի կողմից ներկայացվող պահանջների գնահատման վերաբերյալ,որի նպատակն էր պարզել և գնահատել դասախոսի դասավանդման արդյունավետության մակարդակը:Հարցման արդյունքներից պարզ է դառնում , որ դասախոսական անձնակազմը իրականացնում է կրթական ծրագրով սահմանված չափորոշիչներին համապատասխան կրթություն և համապատասխանում է մանկավարժին բնորոշ մասնագիտական չափանիշներին:*

Հարցումն անցկացվել է անանուն թղթային տարբերակով:

Քույրական գործ մասնագիտության ավարտական կուրսում կուրսային աշխատանքների ներկայացման նպատակով դասախոսի,ցիկլային հնաձնաժողովի նախագահի ,ուսումնական մասի և ՈԱԿ-ի հետ համատեղ կազմակերպվել են աշխատանքների թեմաների քննարկում ,որի արդյունքում ուսումնական տարվա ավարտին ավարտական կուրսի ուսանողները ներկայացրել են իրենց կուրսային աշխատանքները և ըստ դրա գնահատվել :

- ✓ *Ուսումնական տարվա ավարտին Որակի ապահովման կենտրոնի կողմից անանուն հարցում է անցկացվել կուրսային աշխատանքները ներկայացրած ուսանողների շրջանում:Հարցումը կազմակերպվել է Google Forms հարթակով,որի վերլուծության արդյունքում նկատում ենք ,որ ուսանողները ,ինչպես նաև դասախոսները,/ բանավոր քննարկման արդյունքում/ դրական են համարում վերոհիշյալ աշխատանքը:Այդ իսկ պատճառով, առաջարկվում է այն ընդգրկել նաև այլ կրթական ծրագրերում՝ այն անվանակոչելով որպես «Ավարտական աշխատանք»:*

1.2 Պրակտիկանտների շրջանում հարցման կազմակերպում.

Հարցման նպատակն է

- *Կրթական գործընթացների կազմակերպման և կառավարման արդյունավետ մեխանիզմների բարելավում,կատարելագործում:*

2024-2025 ուս.տարվա երկրորդ կիսամյակի ավարտին Google Forms հարթակով հարցում է իրականացվել պրակտիկանտների շրջանում:Պրակտիկա են անցել ուսումնական պլանով նախատեսված համապատասխան կուրսերի ուսանողները՝ ըստ նախօրոք կնքված պայմանագրերի և ժամանակացույցի:

Հարցման նպատակն էր բացահայտել և գնահատել պրակտիկանտների բավարարվածությունը պրակտիկայի վայրից և պրակտիկայի գործընթացից: Հարցմանը մասնակցել են այն կուրսերի ուսանողները,ովքեր պրակտիկա են անցել քոլեջում կամ դեղատներում, Սլավմեդ, Ֆանարջյան, Օպտիմա ֆորմա, Օքսիժեն բուժհաստատություններում:Հարցումների արդյունքների վերլուծությունից ակնհայտ է դառնում , որ Քոլեջի «Քույրական գործ»« Մանաբարձություն » մասնագիտության ուսանողների մեծ մասը բավարված են ֆանարջյան և Սլավմեդ կենտրոններում պրակտիկայի անցկացման գործընթացից,«Բուժական կոսմետոլոգիա» մասնագիտության ուսանողները 5 բալանոց /գնատում՝ 2-5 բալային սանդակ /սանդղակով են գնահատել Օպտիմա ֆորմայում և քոլեջում անցկացրած պրակտիկան:Պրակտիկայի գործընթացը գնահատում են գերազանց՝ նշելով նաև ,որ քոլեջում ձեռք բերած գիտելիքները բավարար են համարում տվյալ հաստատությունում պրակտիկա անցնելու համար:

Պրակտիկայի բազաներում իրենց պրակտիկան անցկացրած բոլոր ուսանողները ցանկություն են հայտնել աշխատել այդ բուժհաստատություններում՝ նշելով հետևյալ առկա առավելությունները.

- *Հաճելի միջավայր՝ գեր հագեցած սարքավորումներով*
- *Սլավմեդ-ի շատ լավ անձնակազմը*
- *Տվյալ վայրի միջավայրը շատ դուր է գալիս*
- *Բուժանձնակազմը շատ բարյացկամ էր,նորը սովորեցնելու պատրաստակամ և այլն:*

Ուսանողների կողմից արված առաջարկությունները վերաբերում են պրակտիկայի գործընթացի ժամաքանակի ավելացմանը:
Հաշվետու ժամանակահատվածում պրակտիկայի վարիչի կողմից կազմվել և գործարկվել է բազաներում պրակտիկաների հսկման ժամանակացույց, որի համաձայն պրակտիկայի

ղեկավարները ամենօրյա հսկողություն են սահմանել պրակտիկայի կազմակերպման և անցկացման գործընթացի վրա:
Պրակտիկայի ընթացքում բոլոր ուսանողները վարել են պրակտիկայի օրագրեր, որոնք ստուգվել և գնահատվել են պրակտիկայի ղեկավարի կողմից:
Բացի հարցումները, պրակտիկայի ղեկավարներին որակի կենտրոնի կողմից տրվել է հատուկ հաշվետվության ձևաթերթ ՝ կենտրոնի կողմից մշակված,որը նախատեսված է գնահատելու պրակտիկայի ընթացքում ուսանողի կատարած աշխտանքը ,վեր հանելու այն խնդիրները ,թերությունները, որոնք նկատվել են ուսանողի մոտ պրակտիկայի ընթացքում՝ անդրադառնալով այն լավարկելու առաջարկություններին:
Հաշվետվությունները լրացրվել են ,որոնց վերլուծություններից նկատելի է պրակտիկայի ղեկավարների գոհունակություն պրատիկա անցած ուսանողների նկատմամբ,սակայն նշվում է ,որ նախընտրելի է պրակտիկայի ժամաքանակի ավելացում՝ ավելի արդյունավետ գործնական հմտություններ ձեռք բերելու համար:

1.3 Շրջանավարտների շրջանում հարցման կազմակերպում.

Հարցման նպատակն է.

- *Շրջանավարտների զբաղվածության և կարիերայի աճի ապահովում*
- *Քոլեջի շրջանավարտների նկատմամբ վստահությունը ամրապնդում*

Մարտ ամսին հարցում է անցկացվել շրջանավարտների շրջանում,որի նպատակն է բարելավել կրթական ծրագրերի բովանդակությունը, ուսուցման մեթոդաբանությունը, ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունավետությունը, ուսանող-դասախոս փոխհարաբերությունները, կրթական ծրագրերի վերաբերյալ հանրությանը տրամադրվող տեղեկատվության արժանահավատությունը: Հարցումն անցկցվել է Google Forms ծրագրով,որին մասնակցել են յոթ շրջանավարտներ,որոնց մեծ մասը քոլեջում ցուցաբերել են բարձր առաջադիմություն,աշխատանքի են ընդունվել ինքնուրույն ,սակայն նշում են ,որ քոլեջում ստացած կրթությունը լիովին բավարար է մասնագիտական ոլորտում աշխատելու համար: Պրակտիկայի գործընթացը, դասախոսների վերաբերմունքը ուսանողների նկատմամբ գնահատվում է գերազանց:Առաջարկությունների և դիտողությունների ներքո նշվում է.

1.*Ուսանողներին պակասում է՝ համբերատարությունը, կոռեկտությունը և լսելու ունակությունը:*
2.*Պահանջել անատոմիայի լավ ուսուցում՝ դասախոսը ուսանողից,ուսանողը դասախոսից:*

1.4 Դասախոսների շրջանում հարցման կազմակերպում

Փետրվար ամսին հարցումներ են անցկացվել դասախոսների շրջանում՝ ուսումնական և նյութատեխնիկական բազայից բավարարվածության աստիճանը պարզելու նպատակով: ։Հարցումն իրականացվել է թղթային տարբերակով։Քոլեջի դասախոսների 70%-ը մասնակցել է տվյալ հարցմանը։Հարցաթերթիկը ներառում է հարցեր, որոնք նախատեսված են գնահատելու քոլեջի ուսումնական ռեսուրսների և նյութատեխնիկական բազայի բավարվածության աստիճանը։

Դասախոսների շրջանում անցկացված հարցման արդյունքում ստացված տվյալները թույլ են տալիս կատարել հետևյալ եզրակացությունը.

1.Դասախոսները բավարարված են քոլեջում առկա ուսումնական ռեսուրսների առկայությունից, հաճախ օգտվում և կիրառում են ռեսուրսների մեծ մասը,մասնակցում են դրանց գնման գործընթացին.

- զեկուցում են պահանջների մասին և առաջարկում եք ռեսուրսներ, որոնք կարող են օգտակար լինել քոլեջում:

Դասախոսների կողմից նշվում է նաև,որ առարկայի կամ մոդուլի առանձնահատկությունից ելնելով՝ քոլեջի ռեսուրսներից օգտվելը անհրաժեշտ նախապայման է հանդիսանում:Աշխատաշուկայի արդիականացման հետևանքով մասնագիտական և գործնական հմտությունների ձևավորմանը նպաստող ուսումնական ռեսուրսների և նյութատեխնիկական բազայի համալրման անհրաժեշտությունը միշտ էլ առկա է:

1.5 Գործատուների շրջանում հարցման կազմակերպում.

2024-2025 ուս.տարվա մարտ ամսին հարցում է իրականացվել գործատուների շրջանում, որի նպատակն է պարզել քոլեջի ուժեղ և թույլ կողմերը, շրջանավարտների մասնագիտական պատրաստվածության մակարդակը ։Հարցումներն իրականացվել են Google Forms ծրագրով ,որտեղ ներառված են փակ և բաց հարցեր:Հարցման միջոցով հնարավորություն է տրվել գործատուներին գնահատելու շրջանավարտների մասնագիտական պատրաստվածության մակարդակը,քոլեջի կրթական ծրագրերի համապատասխանությունը արդի շուկայական պահանջներին:Նրանց հնարավորություն է տրվել նաև ներկայացնելու իրենց առաջարկություններն ու դիտողությունները՝ ի նպաստ քոլեջում կրթության որակի բարելավմանը։ Անցկացված հարցման արդյունքում ստացված տվյալները թույլ են տալիս անել հետևյալ եզրակացությունը.

Շրջանավարտներն իրենց մասնագիտական որակներով մասամբ են համապատասխանում գործատուի ընդհանուր պահանջներին լրացուցիչ կրթական որակավորման կամ վերապատրաստման դասընթացի , կարիք ունեն և հատկապես՝ իրենց մասնագիտության մեջ կիրառվող նորագույն մեթոդների ուղղությամբ:

Ուժեղ կողմ է նշվում սովորելու ցանկությունը,թույլ կողմ ՝ մասնագիտական հմտությունների պակասը:Նշվում է նաև,որ ուսումնական և կրթական ծրագրերը մասամբ են համապատասխանում արդի շուկայական պահանջներին,որի բարելավմանն ուղղված առաջարկությունների հարցման ներքո նշվում է

1. *շեշտ դնել կլինիկական դեղաբանության վրա*
2. *մասնագիտական հմությունների ուսուցման ծրագրում կիրառել նոր մոտեցումներ (օր. մ/մ ներարկման կատարման նոր տեխնիկան), ծրագրերում ավելացնել համակարգչային գրագիտության դասընթաց*

3. օգտագործել վիրտուալ իրականություն, հեռավար դասեր և էլեկտրոնային ուսումնական հարթակներ:

Բացի սա,ՄԲՔ «Որակի կենտրոն»-ի և «Պրակտիկայի կազմակերպման,աշխատանքի տեղավորման, արտաքին կապերի միջազգայնացման կենտրոն»-ի ստորաբաժանումների կողմից իրականացվել է արտաքին շահակիցներից՝ գործատուների կարծիքների հավաքագրում և ստացված տվյալների վերաբերյալ իրականացվել է վերլուծություն:Ամփոփելով գործատուների կողմից ներկայացված կարծիքները՝ կարելի է եզրակացնել, որ ընդհանուր առմամբ գոհ են ուսանողների և շրջանավարտների գիտելիքներից և կարողություններից, բայց ունեն որոշակի նկատառումներ**:**

1.6 Համայնքի շրջանում հարցման կազմակերպում

Մայիս ամսին բնակչության շրջանում իրականացվել է հարցում ՝ Google Forms ծրագրով*:*

Հարցման նպատակն է

- *Աշխատաշուկայի ժամանակակից պահանջները բավարարող ,մրցունակ ու բարձրորակ միջին բուժանձնակազմ պատրաստելու նպատակով արդիականացնել կրթական գործընթացը,կատարելագործել կառավարման մեխանիզմները:*
- *Կրթական գործընթացների կազմակերպման և կառավարման արդյունավետ մեխանիզմների բարելավում,կատարելագործում:*

Հարցումը ներառում է բաց և փակ հարցեր, որոնք նախատեսված են գնահատելու քոլեջի մասնագիտական որակների համապատասխանելիությունը համայնքի բնակիչների շրջանում,քոլեջում առկա մասնագիտությունների արդիականությունը ,ինչպես նաև ,թե համայնքում ինչ մասնագետների անհրաժեշտություն է նկատվում:Համայնքի բնակչության կողմից վերհանված խնդիրները,ներկայացրած առաջարկները պետք է հիմք հանդիսանան վերհանելու քոլեջի ուժեղ և թույլ կողմերը և ավելի արդյունավետ կազմակերպելու հետագա ուսուցման գործընթացը,ինչպես նաև կրթական ծրագրերում որոշակի փոփոխությունների իրականացմանը: Քաղաքացիությունը այս առումով շատ պասիվ դիրքում է գտնվում :

Սակայն դիմորդների թվի աճով պայմանվորված և վերլուծության արդյունքներից կարող ենք հավաստել ,որ ավելի մեծ պահանջարկ են ներկայացնում բուժական կոսմետոլոգիա և քույրական գործ մասնագիտությունները ,ինչպես նաև քաղաքացիների կարծիքով քոլեջի շրջանավարտներն իրենց մասնագիտական որակներով համապատասխանում են համայնքի բնակիչների պահանջներին:

1.7 Դասալսումներ

Հաշվետու ժամանակահատվածի երկրորդ կիսամյակում որակի ապահովման պատասխանատուի և ուսումնական մասի վարիչի կողմից համատեղ իրականացվել են պլանավորված և ոչ պլանավորված դասալսումներ ՝ պլան-ժամանակացույցի համաձայն ,որի ընթացքում գնահատվել և վեր են հանվել դասավանդողների մասնագիտական և մեթոդական կարիքները՝ համապատասխան ձևաթերթով*:*

Դասալսման նպատակն է՝

1.դասի կազմակերպման և անցկացման գործընթացի դիտարկում
2.ուսումնական գործընթացում դասաժամի արդյունավետության բարձրացում
3.ուսումնական գործընթացի կազմակերպման կարիքների բացահայտում
4.դասի կազմակերպման և անցկացման թերությունների վերհանում
5.լավագույն փորձի փոխանակում ու տարածում
6.կատարված դիտարկումների և ամփոփումների հիման վրա՝ուսումնառության և դասավանդման որակի բարձրացմանն ուղղված միջոցառումների մշակում ու իրականացում

Դասախոսների առումով դասալսման խնդիրն է վերհանել և գնահատել.

1.դասախոսի կողմից դասաժամի արդյունավետ օգտագործման արդյունավետությունը
2.դասախոսի կողմից բարեվարքության,ակադեմիական ազնվության նորմերի պահպանումը
3.խտրական վերաբերմունքի բացառում

Կազմակերպվել է 5 դասալսում,որի արդյունքները ամրագրվել են համապատասխան ձևաթղթի վրա: Գործնական և տեսական դասերի ժամանակ յուրաքանչուր դասախոս գնահատվել է տարբեր սանդղակով:Դասալսումների ժամանակ ուշադրություն է դարձվել դասի կառուցվածքին, բովանդակության մատուցմանը, դասավանդման մեթոդների կիրառմանը, ուսանողների ներգրավվածությանը ,կոմունիկացիայի և դասախոսի խոսքի հստակությանը, ժամանակի արդունավետ կառավարմանը, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմանը, հետադարձ կապի ապահովմանը:

Վերլուծելով 2024-2025 ուս.տարվա դասալսումների արդյունքները՝ պարզվել է, որ դասախոսների մեծ մասը չեն տիրապետում ուսուցման ժամանակակից մեթոդներին,սակայն ունեն դասընթացի արդյունավետ դասավանդման այլ մոտեցում ,որոնք հնարավորություն են տալիս ուսումնառության վերջարդյունքին հասնել անհրաժեշտ նպատակին :

1.8 Նախապատրաստական բաժնի դիմորդների շրջանում հարցման կազմակերպում.

Հարցման նպատակն է

- *ուսանողական համակազմի ընդլայնում,դիմորդների կայուն հոսքի ապահովում*
- *նախապատրաստական դասընթացի արդյունավետության գնահատում*

ՄԲՔ-ում ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի փետրվար ամսին ապագա դիմորդների համար իրականացվել է անվճար նախապատրաստական դասընթաց՝ կենսաբանություն առակայից՝ եռամսյա ժամանակահատվածով,որի ավարտին Google Forms հարթակով կազմակերպվել է հարցում՝ նախապատրաստական դասընթացի գնահատման նպատակով: Հարցումը տեղադրվել է viber-ի խմբում,որին մասնակցել է 38 դիմորդ: Հարցման վերլուծության արդյունքում կարող ենք փաստել,որ նախապատրաստական խմբի մասնակիցները լիովին գոհ են վերոհիշյալ գործընթացից և իրենց գոհունակությունն են հայտնում դասավանդող դասախոսից:Ինչպես նաև առաջարկությունների տակ նշվում է.

- Կուզենային, որ քննությունը գրավոր լիներ, որովհետև հնարավոր է լավ պատրաստված լինեն, բայց լարվածության պատճառով չկարողանան նորմալ հանձնել:
- Դասընթացից ընդհանուր տպավորությունը դրական է:
- Նյութը մատուցվում էր հստակ ու հասկանալի:

- Օնլայն հանդիպումները իրականացնելը բավական բարդ էր,ինտերնետ կապի թուլության պատճառով,ինչը խոչընդոտում էր ինչ-ինչ իրավիճակներում դասապրոցեսին մասնակից լինելուն:

Նշենք նաև որ որոշ դասընթացներ կազմակերպվել են նաև առկա ձևաչափով՝ քոլեջում:

1.9 Արագ արձագանքման արկղի պարունակության վերլուծում

Նպատակն է

- *բացահայտել ուսանողների կարիքները*
- *ուսանողների տեղեկացվածության մակարդակը*
- *ուսանողների բավարարվածության աստիճանը*
- *կոռուպցիոն վտանգների բացահայտումը*

Արագ արձագանքման արկղի միջոցով հնարավորություն է ընձեռվում ուսանողներին անդրադառնալ իրենց ուսումնառության ընթացքում առկա խնդիրներին և դրանց բարելավման ուղղությամբ որոշակի առաջարկությունների դիտարկմանը:Արկղը բացվում է ուսումնառության տարվա ավարտին՝ տնօրենի ,ուսումնական մասի,որակի ապահովման կենտրոնի հետ համատեղ,որից հետո իրականացվում է վերլուծություն:Այնուհետև վերլուծության արդյունքները քննարկվում են մանավարժական խորհրդում՝ ենթադրելով բարելավման ուղված առաջարկությունների տրամադրում:
Արկղի վերլուծության արդյունքում որևէ խնդիր վեր չի հանվել:

ՔՈԼԵՋԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԿԱՏԱՐՎԱԾ ՆԵՐՔԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Քոլեջի յուրաքանչյուր կառուցվածքային ստորաբաժանում իրականացրել է տարեկան հաշվետվություն՝իր կատարած աշխատանքների վերաբերյալ: Դիտարկվել է աշխատակցի պաշտոնի անձնագրում ամրագրված գործառույթների և հաշվետվությունների համեմատական վերլուծություն, որի հիման վրա Որակի կենտրոնը աշխատանքային պլանով նախատեսված իր գործառույթների շրջանակում իրականցրելու է ներքին գնահատում՝ մշտադիտարկելով ստորաբաժանումների կատարած հաշվետվողականության մեխանիզմների համապատասխանեցումը երկարաժամկետ և կարճաժակետ պլանավորմանը: Այդ ուղղությամբ աշխատանքները դեռևս շարունակվում են,որի արդյունքները ակնառու կլինեն ներքին գնահատման հաշվետվության մեջ:

Քոլեջի ներքին գնահատումն իրենից ներկայացնում է մատուցվող կրթական ծառայությունների՝ միջին և մասնագիտական կրթական ծրագրերի որակի մշտադիտարկման և հսկողության գործընթաց:

Ներքին գնահատման իրականացումը նպատակ ունի բարելավելու կրթական ծառայությունների մատուցման որակը, ինչպես նաև նպաստելու գործունեության արդյունավետության բարձրացմանը ուսումնական գործընթացի կազմակերպման, դասախոսների աշխատանքի արդյունավետության և ուսանողների առաջընթացի ուսումնասիրման միջոցով:

Թերևս քոլեջում մշտապես իրականացվել են բարեկարգման և նորոգման աշխատանքներ,սակայն բարեկարգման և համապատասխան ռեսուրսներով համալրման անհրաժեշտություն միշտ էլ նկատվում է: Քոլեջի գործունեության բոլոր ոլորտներում ապահովվում է օրինականության, իրավահավասարության և հաշվետվողականության սկզբունքների պահպանումը:

Որպես սկզբնական եզրակացություն կարող եմ նշել,որ ստորաբաժանումների պաշտոնի անձնագրերում ամրագրված իրենց գործառույթները համապատասխան չեն իրենց ստորաբաժանման գործառույթներին ,որի պատճառով նախատեսվում են պաշտոնի անձնագրերի վերանայում և գործառույթների հստակեցում:

ՎԵՐԱՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Ինստիտուցիոնալ կարողությունների ինքնքվերլուծության գործընթաց

Կարևորելով պետության կողմից իրականացվող հավատարմագրման գործընթացը քոլեջը 2024-2025 ուսումնական տարում գտնվում էր վերհավատարմագրման փուլում ,այդ իսկ պատճառով որակի ապահովման կենտրոնի նախաձեռնությամբ կազմակերպվել և իրականացվել է քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնքվերլուծության գործընթացը: Փորձագիտական խմբի կողմից ներկայացրած նախնական զեկույցի հիման վրա որակի ապահովման կենտրոնը և ուսումնական մասը միասին, համակարգելով բարելավման պլանի կատարման աշխատանքները ,ինքնավերլուծության զեկույցը ներկայացրել են ՈԱԱԿ:Այնուհետև փորձագիտական խմբի այցելությունից ,քննարկումներից հետո ՈԱԱԿ-ի կողմից քոլեջին շնորհվել է հավատարմագրում՝ չորս տարի ժամանակահատվածով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2024-2025 ուսումնական տարվա կրթության որակի պատասխանատուի կատարած հարցումների վերլուծության արդյունքում, ներքին գնահատում իրականացնելու ընթացքում վեր են հանվել որոշակի խնդիրներ ,որոնց ուղղությամբ անհրաժեշտություն է նկատվում հաջորդ ուսումնական տարվա ընթացքում իրականացնել բարելավման աշխատանքներ:

Քոլեջի որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է իր գործունեության թափանցիկությունը և հաշվետվողականությունը ներքին շահակիցների առջև ,սակայն փորձագիտական խմբի առաջարկությամբ նախատեսվում է քոլեջի կայքէջում առանձին բաժին հատկացնել որակի կենտրոնին՝ ապահովելով հաշվետվողակնություն և թափանցիկություն:

Վերլուծելով 2024-2025 ուստարվա կատարած աշխատանքները՝ նախատեսվում են բարելմանն ուղղված հետևյալ բարեփոխումները.

ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

- *Բարելման պլանով նախատեսված աշխատանքների համակարգում և վերլուծում:*
- *Պաշտոնի անձնագրի վերանայում ,պարտականությունների հստակեցում:*
- *Որակի ապահովան կենտրոնի երկարաժամկետ պլանի ներդրում:*
- *Վարչական համակազմի պաշտոնների անձնագրերի վերանայում, պարտականությունների հստակեցում:*
- *Կարճաժամկետ պլանների ձևաչափի սահմանում և ներդնում: Կարճաժամկետ պլանների և ՌԾ-ի փոխկապակցվածություն ,ՊԻԳԲ շրջափուլի լիարժեք գործարկում:*
- *Հարցումների պլան-ժամանակացույցի հստակեցում և առկա հարցաշարերի լրամշակում:*
- *Քոլեջի ՌԾ –ից բխող գործողությունների գնահատում:*
- *Կրթական ծրագրերի մշտադիտարկում և գնահատում՝ համադրելով ներքին և արտաքին շահակիցների առաջարկությունները և կարծիքները:*
- *Ստորաբաժանումների կանոնակարգերի և որոշ ընթացակարգերի,կարգերի վերանայում, մշակում :*
- *Դասախոսական կազմի կողմից Քոլեջի կրթական գործընթացի որակի ապահովման աշխատանքներում ներգրավածության և համագործակցության ակտիվություն*
- *Ցիկլայինների հանձնաժողովների կազմի վերանայում , առարկաների և մոդուլների վերաբաշխում, գործառույթների հստակեցում:*
- *Մոնիթորինգի իրականացում՝ աշխատաշուկայի հեռանկարային կարիքների բացահայտման նպատակով:*
- *Իրականացնել կրթության որակի մշտադիտարկում ,բացահայտել ուսումնական գործընթացի կազմակերպման ուժեղ և թույլ կողմերը,պարբերաբար իրականացնել ինքնավերլուծություն և ինքնագնահատում:*
- *Ակտիվացնել ուսանողների մասնակցությունը որակի ապահովման գործընթացներում:*
- *Որակի գնահատման չափանիշներին և ինքնագնահատման գործընթացին վերաբերող վերլուծական հաշվետվության հրապարակայնություն և թափանցիկություն ապահովում*
- *Արտաքին շահակիցների հետ կայուն հետադարձ կապի հստակ մեխանիզմների ստեղծում:*

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ՝ Հ.ՄՈՒՐԱԴՅԱՆ

SWOT վերլուծության

Ուժեղ կողմեր	*Թույլ կողմեր*
Որակի ապահովման քաղաքականության մեխանիզմների և գործիքակազմի առկայություն	*Քոլեջի կրթական գործընթացի որակի ապահովման աշխատանքներում դասախոսական կազմի մոտիվացիայի պակաս:*
Ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածություն որակի գնահատման գործընթացին /անանուն հարցումներ, ֆոկուս-խմբային հարցումներ /	*Արտաքին շահակիցների առջև հաշվետվողականության և թափանցիկության առկայություն,հետադարձ կապի ապահովում:*
Որակի ապահովման կենտրոնի և ստորաբաժանումների ակտիվ համագործակցային միջավայրի առկայություն	*ՀՀ և միջազգային ՄՈՒՀ-երի հետ որակի ապահովման գործընթացների քաղաքականության և ընթացակարգերի բենչմարքինգի անկատարություն*
Անհրաժեշտ մարդկային, նյութական, ֆինանսական ռեսուրսների առկայություն	
Ցիկլային հանձնաժողովների և ստորաբաժանումների հետ ակտիվ համագործակցություն:	
Հնարավորություններ	***Ռիսկեր***
ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպվող վերապատրաստումների շնորհիվ ՈԱԿ-ի գործունեության անընդհատ կատարելագործում	*Որակի ապահովման կարևորության ոչ բավարար գիտակցում արտաքին և ներքին շահակիցների կողմից*